

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի N^o 216 որոշումը

Մայիսի 10, 1990թ

Ք.Երևան

ՀԽՍՀ Ժողկրթության նախարարության գիտա-արտադրական հանրակրթական փորձարարական «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրի գործունեության լավացմանն ուղղված միջոցների մասին

Ազգային դպրոցի հարուստ ավանդույթների վերածնման և առաջավոր կրթական գաղափարների, ներառյալ թիվ 183 դպրոցի մանկավարժական ստեղծագործական կոլեկտիվի մշակածների, ներդրման նպատակով՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում է՝

1. Սահմանել «Մխիթար Սեբաստացի» դպրոց-համալիրի հիմնական նպատակներն ու խնդիրները.

ա) դաստիարակչական-կրթական գործընթացի շրջանակներում յուրաքանչյուր անհատի ներուժի բացահայտմանը և դրա զարգացմանն ուղղված առավելագույն պայմանների ստեղծումը, անհատի հոգևոր ազատագրմանը նպաստող բազմակողմանի աջակցությունը

բ) դպրոց-համալիրի մասնաճյուղերի ստեղծումը հանրապետության քաղաքներում և գյուղական շրջաններում, նրանցում վարժարանների, գիմնազիաների, գյուղատնտեսական և գեղագիտա-հումանիտար ենթահամալիրների և աշխատանքային ուսուցման այլ ձևերի ստեղծումը, որոնք ապագայում կվերաճեն ինքնուրույն տարածքային կրթական համալիրների:

.....

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ՝

Վ. Մարգարյանց

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ՝

Գ. Վարդանյան